



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 8 ՅՈՒԻՍ, 2024

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս իս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ՍՈՐՎԵՑՈՒՐ ԻՆՏԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Սորվեցուր ինձի, Տէր, կանոններդ պահելու կերպը,
եւ մշտապէս պիտի կարարեմ զանոնք:
Տուր որ հասկնամ Օրէնքդ,
որպէսզի կարարեմ եւ ամբողջ սրտով հնազանդիմ անոր:
Պատուէրներուդ շախդին մէջ առաջնորդէ զիս,
որովհետեւ անոնցմէ հաճոյք կ'առնեմ:
Ըրէ այնպէս՝ որ սիրքս պատուիրաններուդ փափաքի,
քան անձնական հարստութիւն դիզելու:
Հայեացքս հեռացուր դարարկ բաներէն,
եւ քու կամքիդ գործադրութեամբ՝ կեանք Կուր ինձի:
Ես քու ծառայ եմ, կարարէ ինձի Կուր ինձ խոստումդ,
այն խոստումը՝ որ կու տաս քեզմէ ակնածողներուն:
Հեռու պահէ նախապիւնքը՝ որմէ այնքան կը վախնամ,
որովհետեւ վճիռներդ արդար են:
Միակ փափաքս է՝ հրահանգներդ կարարել.
Կեանք Կուր ինձի, Դուն՝ որ արդար ես:

ՇԱՐԱԿԱՆ

Նայեաց սիրով, Հայրդ գթած, Ի քո ստեղծեալ գործս ձեռաց.
Եւ զբանակս հրեշտակաց, Տուր պահապան մեզ տկարացս,
Փրկեա զանձինս ի փորձանաց, Ի խաւարի շրջող դիւաց.
Ձի ի տուրնջեան և գիշերի, Տացուք քեզ փառս անլռելի:
Էին անեղ, անսկզբան՝ Ծնունդ անճառ Որդի և Բան.
Որ արարեր զտիւ գործոյ, Եւ զգիշեր ի հանգիստ քնոյ.
Տուր ի ննջել՝ աչաց մարմնոյ, Արթուն լինել մեզ ըստ հոգւոյ.
Ձի ի տուրնջեան և գիշերի, Տացուք քեզ փառս անլռելի:
Բարուն հոգւոց բանաւորաց, Աղբիւր լուսոյ, քաշխող շնորհաց.
Ի փակիլ դրանց բնութեանց մարմնոց, Լոյս տուր աչաց սրտից մերոց.
Ի գիշերաց առ քեզ կանխել, Ընդ հրեղինացն օրհնաբանել.
Ձի ի տուրնջեան և գիշերի, Տացուք քեզ փառս անլռելի:

ԱՊՈԹՔ

Տէր Աստուած գթութեան, փրկութեան եւ ողորմութեան, քաւութեան եւ նորոգութեան, բժշկութեան եւ առողջութեան, լուսաւորութեան եւ կենդանոթեան, բարութեան եւ անմահութեան, յիշէ մեզ երբ զաս քու թագաւորութեամբդ: Քեզի կը պաղապիւնք՝ քեզի խաչակից եղողին հետ, յաւիտեանս. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐՔ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ: (X3)

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց:

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա՛:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղերոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՄՈՍ 62

ԱՍՏՈՒԱԾ Է ՓՐԿԻՉԸ ԵՒ ԱՊԱԻԷՆԸ

Սիայն Աստուծոյ հոգիս հանգիստ կը գտնուի. անկէ կու գայ փրկութիւնս:

Միայն ան է ապաստանս եւ փրկութիւնս, ան է իմ ապաւենս, բնաւ պիտի չսասանիմ:

Դուք՝ ով մարդիկ, մինչեւ ե՛րբ վրաս պիտի յարձակիք,

գիս խորքակելու համար՝ խախտած պարի պէս,

փլչելու վրայ եղող ցանկապարի պէս:

Միայն կը խորհիք գիս փառաբանելու բարձրութենէս,

հաճոյք կ'առնէք ստրկութենէն. բերնով կ'օրհնէք, բայց ձեր միտքէն անէ՞ծք կու փառ:

Միայն Աստուծոյ եւս հանգիստ կը գտնուի, ան է որ յոյս կու փայ ինծի:

Միայն ան է ապաստանս եւ փրկութիւնս, ան է իմ ապաւենս, եւ ես պիտի չսասանիմ:

Աստուծոյ կախում ունին փրկութիւնս եւ փառքս.

ան է ամուր միջնաբերդս. եւս Աստուծոյ կ'ապաւինիմ:

Անոր վստահեցէք միշտ, ով ժողովուրդ,

անոր դիմաց պարպեցէք ձեր սիրտը.

Աստուած է մեր ապաւենը:

Բոլոր մարդիկ շունչ մըն են պարգապէս.

ռամիկ թէ ազնուական՝ խաբկանք են, ուրիշ ոչինչ.

կշիռքի մէջ որ դրուին՝ միասնաբար ոչինչէն ալ նուազ են:

Հարստահարութեան մի ապաւինիք,

յափշտակուած բաներով մի հպարտանաք.

նոյնիսկ եթէ ձեր հարստութիւնը բազմապարիկ ըլլայ,

ձեր սիրտը անոր չըլլայ որ կապէք:

Աստուած ինք յայտարարեց,

եւ քանիցս եւս լսեցի՛ թէ գորութիւնը Աստուծոյ կը պարկանի:

Այո, ով Տէր, ողորմութիւնն ալ քուկդ է,

որովհետեւ իրաքանչիւրին կը հապուցանես իր գործերուն համաձայն:

Պահապան ամենայնի Գրիստոս,

աջ ճո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,

ի նստիլ ի տան, ի գնալ ի ցանապարհ,

ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.

եւ ողորմեա՛ ճո արարածոց եւ ինձ բազմամեղիս:



ԱՍՏՈՒԱԾ Է ՓՐԿԻԶԸ ԵՒ ԱՊԱԲԷՆԸ

Ինչպես ասկե՛ առաջ րեսանք, որ Սաղմոսները որպես աղօթք, ոչ միայն Դաւիթ կ'աղօթէ իրեն համար, այլ՝ նաեւ մեզի կու փայ օրինակը երբ մենք ալ նոյն վիճակին մէջէն կ'անցնինք: Որովհետեւ Դաւիթի վիճակը նաեւ իմ վիճակս կրնայ ըլլալ, մի գուցէ քիչ մը աւելի քիչ մը պակաս, մի գուցէ այսօր չէ, բայց վաղը անպայման: Հերեւաբար, ահա պարբարութեան առիթ մըն է, որպէսզի երբոր մենք ալ այդպիսի կացութեան մը կամ վիճակի մը մէջ ըլլանք կամ անցնինք ինչ ընելու ենք:

Այս Սաղմոսը խորքին մէջ ամենօրեայ աղօթք պէտք է ըլլայ իւրաքանչիւրիս համար, որովհետեւ ամենօրեայ մարտահրաւերներու դիմաց կրնանք ըլլալ եւ ենք: Այս Սաղմոսը մեզի կը փոխանցէ եօթը կէտեր. - Համբերութիւն, Կախեալ վիճակ, Աղօթք, Յոյս, Վարահութիւն, Սուրբ Հոգիին վրայ կեդրոնացում, եւ Հաւաքք:

Առաջին իսկ համարով Դաւիթ կը խոստովանի ու կը դաւանի, որ իր հանգիստը, ու մանաւանդ հոգիի հանգիստը միայն Աստուծոյն կը գտնէ: Հերաքրքրական է որ հոգի բառը կ'աւելցնէ: Որովհետեւ մարդս ըլլալով մարմին, հոգի եւ միտք, ըստ այնմ հանգիստի կարիքը ունի: Կրնայ մարմինս հանգիստ ըլլալ, բայց հոգիս խռովքի մէջ, կրնայ հոգիս հանգիստ ըլլալ, բայց մարմինս ցաւի մէջ: Այսպէս Դաւիթը շեշտը կը դնէ հոգիի հանգիստի վրայ, որովհետեւ հոգին եթէ հանգիստ չէ, մարմինը որքան ալ հանգիստ ըլլայ, մարդը հանգիստ չէ: Ահա Դաւիթ իր հոգիի հանգիստը միայն կը գտնէ Աստուծոյն: Եւ այդ հանգիստը համբերութեամբ կը սպասէ, որպէսզի Աստուծոյ ըստ այնմ պարասխանէ եւ իր ժամանակին իր պտուղը կու փայ հասկացողութեամբ: Երկրորդ, երբ զԱստուծոյ կ'ընդունի իրեւ ապաւեն, ժայռ, հերեւաբար ով կրնայ զինք սասանեցնել: Այնպէս ինչպէս Քրիստոս պիտի ըսէ. «Եթէ քու ժայռի վրայ հիմնուած, շինուած է, այդ քունը կանգուն կը մնայ» չի սասանիր: Սասանիլ, կը նշանակէ շարժի րեղէն: Ահա Դաւիթ այդպիսին է որ Աստուծոյ իր ապաւենն է, իր ժայռն է, որուն վրայ կառուցուած է, այլ խօսքով Անկէ կախեալ է: Ահա այսպիսի կացութեան մէջ, երբ Աստուծոյ ըստ այնմ կը պարասխանէ, այլ խօսքով իր յարմար ժամանակին, բայց մենք անհամբեր կը սպասենք, Աստուծոյ կը զգուշացնէ, որ ուրիշ միջոցներու չդիմենք: Այդ համբերութիւն եւ կախեալ վիճակը նաեւ հարաբերութիւն կապ կ'ենթադրէ, եւ այդ կապը Աստուծոյ հետ կ'ըլլայ խօսակցութեամբ, այսինքն՝ աղօթքի ճանքով, մնայուն կապի մէջ ըլլալու, Անոր հետ խօսելու: Այս նաեւ կ'ենթադրէ յոյս եւ վարահութիւն, որովհետեւ երբ երկար կը րեւէ պարասխանելը, կրնանք յուսահատիլ եւ չվարահիլ: Դաւիթ դարձեալ կը շեշտէ որ Աստուծոյ Ինք է ապաւենն ու փրկութիւնը, եւ կը կեդրոնանայ ոչ թէ նիւթական հարստութեան վրայ, այլ՝ հոգեւոր ու մանաւանդ՝ Սուրբ Հոգիին: Ի վերջոյ, հաւաքքը որ ունի Աստուծոյ վրայ, որովհետեւ այդ հաւաքքով կը ճանչնայ զԱստուծոյ որ զօրութիւնը Աստուծոյ կը պարկանի, նաեւ զօրութեան կողքին Դաւիթ կը հաւաքայ, որ ողորմութիւնն ալ Աստուծոյ կը պարկանի: Այսինքն՝ որքան զօրութիւնը, նոյնքան եւ ողորմութիւնը: Այսինքն՝ երբ վերադառնայ Աստուծոյ, Աստուծոյ պարբար է ողորմելու: Յաճախ այնպէս կը կարծենք եւ այնպիսի րրամադրութիւն ունինք, թէ ինչպէս կարելի է Աստուծոյ վերադառնալ այսքան մեղք գործելէ ետք, երբ մանաւանդ՝ Աստուծոյ իսկ քուած խոստովանի համաձայն, դարձէք Ինծի եւ ես ձեզի պիտի դառնամ: Ձեզ ձիւնէն աւելի ճերմակ պիտի ընեն: Ուրեմն ինչն է որ մեզ եր պիտի ընդունի եթէ ոչ Աստուծոյ ողորմութիւնը: Այլապէս Անոր զօրութեան, ու մանաւանդ՝ արդարութեան դիմաց, ոչ ոք կրնայ արդարանալ:

Հերաքրքրական է, որ բառացի թարգմանութիւնը առաջին այս համարին այն է, որ Դաւիթ կ'ըսէ. «Հոգիս լուծեամբ կը սպասէ Աստուծոյ, որովհետեւ անկէ կու գայ իմ փրկութիւնս»: Դաւիթ նեղութեան ու հալածանքի մէջ է, բայց լուծեամբ կը սպասէ, առաւել եւս հաւաքով եւ վարահութեամբ կը սպասէ, որ իր փրկութիւնը Աստուծոյ պիտի գայ: Դաւիթ իր զօրութիւնը Աստուծոյ սրանալու արդէն րրամադրութեան մէջ է: Դաւիթի հաւաքքը պայմանաւորուած չէ, Աստուծոյ ընէ յետոյ ինք հաւաքայ, այլ ընդհակառակը կը հաւաքայ եւ հաւաքքով կը սպասէ, որ պիտի կարարուի:

Այս Սաղմոսը նաեւ կը սորվեցնէ Աստուծոյ դիմաց բանալու մեր սրտերը, արքայայտելու Աստուծոյ ըսելու Անոր մեր կարիքները: Այո, որքան ալ Աստուծոյ ամենագէտ ու ամենաբար է, բայց նաեւ կը սպասէ որ մենք դիմենք Իրեն, խնդրենք Իրմէ, ոչ թէ որպէսզի մեզ նուաստացնէ, այլ որպէսզի մեզի փայ առիթը, որ արդեօք մենք գիտենք մեր կարիքները: Ժողովրդային խօսք մը կայ, «Չլացող մանուկին կաթ չեն րար»: Միթէ ծնողը չի գիտեր թէ կաթի ժամն է, բայց մինչեւ այն արեւն որ երեխան չի լար, մայրը կաթ չի րար: Նոյնպէս ալ Աստուծոյ Ինք կը սպասէ որ մենք դիմենք եւ խնդրենք Իրմէ:

Հեղափոխականները, Դաիթ իր թշնամիները կը ներկայացնէ խախտած պարի եւ փլուելու վրայ եղող ցանկապարի: Այսինքն՝ խախտու էն անոնք Աստուծոյ դիմաց: Որքան ալ գորաւոր կերելին կամ կը կարծուին, բայց Աստուծոյ դիմաց արդէն խախտած պարի պէս են:

Դաիթ անգամ մը եւս կը կրկնէ ըսելով, Աստուծոյ իր հանգիստը կը գրնէ, Ան է որ յոյս կու տայ իրեն, Աստուծոյ կախում ունի իր փրկութիւնը, եւ ամբողջութեամբ Աստուծոյ կ'ապահին: Ուստի իբրեւ այդպիսին, օրհնութիւն է որ պիտի սրանայ, այնպէս ինչպէս Սաղմոս 40.4 կ'ըսէ. «Երանի անոր, որ Տիրոջ կը վստահի»: Այսպէս երանի կը նշանակէ օրհնութիւն: Դաիթ նաեւ իր օրհնակովը կը քաջալերէ որ մենք ալ Աստուծոյ վստահինք, ու Անոր դիմաց պարպենք մեր սիրտը: Որովհետեւ եթէ այս աշխարհի կամ աշխարհիկ կամ աշխարհային բաներու վրայ դրած ենք կամ կը դնենք մեր յոյսը, Դաիթ կը զգուշացնէ, որ անոնք բոլորն ալ անցողակի են: Հեղափոխական է, որ այսպէս Դաիթ կը ներկայացնէ մարդկային երկու խաւերը՝ ռամիկ, որոնք պարզապէս շունչ են, կը շնչեն եւ օր մը այդ շունչը կը կենայ, իսկ եթէ ազնուական են, իրենց ունեցածը խաբկանք է: Ան նաեւ կը զգուշացնէ որ հարստահարութեան չապահինինք, յափշտակուած բաներով ալ չհպարտանանք, եւ զգուշ ըլլանք, որ մեր սիրտն ալ անոր չկապենք: Քրիստոս խօսքերն են, հոն ուր որ է մեր գանձը հոն է նաեւ մեր սիրտը: Ուերմն, կեդրոնանանք Աստուծոյ, խնդրելով որ Սուրբ Հոգին իմաստութիւն տայ ու առաջնորդէ մեզ որպէսզի Աստուծոյ կամքին համաձայն կեանքը ապրելու:

Ի վերջոյ, Դաիթ կը յայտարարէ, որ գործութիւնը Աստուծոյ կը պարկանի նաեւ ողորմութիւնը, եւ այս պարագային Աստուծոյ այդ ողորմութիւնը ցոյց տուաւ աշխարհ դրկելով Իր Միածին Որդին, մեր Տէրն ու Փրկիչ Յիսուս Քրիստոսը, որպէսզի մեզ ազատէ, եւ աւարտին իրաքանչիւրին գործերուն համաձայն հարուցանէ: Թող այս աղօթք Սաղմոսը իրաքանչիւրիս աղօթքը ըլլայ, ինչպիսի պայմաններու մէջ ալ ըլլանք, թող մեր հոգիները իրենց հանգիստը գրնեն Աստուծոյ, վստահինք Իրեն ամբողջութեամբ, ընդունինք զԻնք որպէս մեր ապաստանը, փրկութիւնը, ապաւենը որուն երբեք պիտի չսասանինք, ընդհակառակը մեր թշնամիները նման են փլուելու վրայ եղող պարի ու ցանկապարի: Չվստահինք նիւթական ու աշխարհիկ ինքքերու, որքան ալ անոնք կան, թող որ անոնք պարզապէս միջոց ըլլան, բայց մեր յոյսն ու վստահութիւնը Աստուծոյ վրայ դնենք, եւ առաջնորդուինք Սուրբ Հոգիով աստուածահաճոյ կեանք մը ապրելու եւ սպասելու Տիրոջ պարտապարտ յափտենական կեանքին: